ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/6483/02/24 ք. Երևան
26 Օգոստոսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի <<ԱՄԱ Փրոդաքշն>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ 20.06.2024 թվականին կնքված թիվ ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը և 22.07.2024 թվականի <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին>> որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել 12.07.2024թ.-ին Վեդու համայնքապետարանի կողմից հայտարարված ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը, անվավեր ճանաչել 22.07.2024թ.-ի ՀՀ Վեդի համայնքի ղեկավար Գ. Սարգսյանի կողմից <<ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ>> ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 /երկու/ տարի ժամկետով ներառելու որոշումը, Վեդու համայնքապետարանից հօգուտ <<ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ>> ՍՊԸ-ի բռնագանձել որպես պարտավորության հիմնական գումար 6.198.800 ՀՀ դրամ, ինչպես նաև դատարան դիմելու օրվանից սկսած տույժ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով:
Հայցադիմումը էլեկտրոնային համակարգով դատարան ներկայացվել է 09.08.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/6483/02/24 քաղաքացիական գործը, որը 12.08.2024

թվականի մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանին:
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /դատավոր Գ. Վարդանյանի/ 16.08.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Հայցվորի ներկայացուցիչը էլեկտրոնային համակարգով 21.08.2024 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել 12.07.2024թ.-ին Վեդու համայնքապետարանի կողմից 20.06.2024թ.-ին կնքված Վեդի համայնքի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծումը, անվավեր ճանաչել 22.07.2024թ.-ի ՀՀ Վեդի համայնքի ղեկավար Գ. Սարգսյանի կողմից <<ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ>> ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 /երկու/ տարի ժամկետով ներառելու որոշումը:
Հայցադիմումը մակագրվել և հասանելի է դարձել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին 21.08.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք,

պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և ներկայացվում են Համակարգի միջոցով՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և Համակարգով ուղարկելու միջոցով:
Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանից պետք է պահանջել <<ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն էլեկտրոնային համակարգի միջոցով (բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. <<ԱՄԱ Փրոդաքշն>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքապետարանի՝ 20.06.2024 թվականին կնքված թիվ ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը և 22.07.2024 թվականի <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին>> որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
2. ՀՀ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանից պահանջել դատարան ներկայացնել <<ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/05>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն էլեկտրոնային համակարգի միջոցով (բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքապետարանի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4. Հայցադիմումն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 09.08.2024 թվականին:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Սարգիս Երիցյան

Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072